զովեն· մարդու կորայ՝ եպիսկոպոսաց, վարդապետաց, մեծատանց չատ, աղքատն սակաւ· չատէն՝ չատ, քիչէ՝ քիչ· մուրացիկքն պիլա պիտի տան, ոչ թէ կարդաւորքն: Այս ուղեն ով ինչ խոստացել է կամ ուխտ է արել, թէ քառասնից, թէ ժամուց, եթէ հոգոյ բաժին, թէ մատաղի, թէ խաչի, թէ շուրջառի, եւ թէ այլ ինչ իրաց, անդ պիտի տրվի:

Իսկ ինձ կայր սիրելի եւ ծանօթ մի եպիսկոպոս՝ Ղուկաս անուն· սա եւ ի Լէհ երեկ հետ ինձ նուիրակ[1]· ես նորա բաղում գործս եւ բան կատարեցի Ստամպօլ· այլ եւ գիրս յոլով գրեցի նմա եւ զայլ սպասաւորութիւնս նորա առնէի: Նա տեսեալ զիս յոյժ ուրախ եղեւ եւ ծանոյց զիս առաջնորդին· քանզի սա տեսուչ եւ վերակացու էր, այլ եւ յաջորդ պարոնտէրին· եւ զնա առաւել սիրէր քան զամենայն: Սա էած զիս օր մի առ նայ· եւ անկեալ յոտս նորա՝ ետու զհոգէբաժինս իմ· եւ նա առեալ օրհնեաց զիս եւ ասէ· «Այլ պիտոր աւելի տայիր, դու Լէհցի ես· ապա Ղուկաս եպիսկոպոսն զոհ է քէնէ· բաղում աշխատանք եւ խզմէթ արել ես վասն սուրբ Երուսաղեմայ»: Եւ ես ասի· «Լէհու վաղ եմ ելել· որբ մի եմ եւ յաղքատ ծնողաց· այս չափս ալ իմ ձեռացս էմակն է· ընկալ զսակաւս յինէն»: Եւ նա հրամայեաց տալ ինձ օտա մի առան-

73 մուրացիքն: — 77 չուռջառի: — 78 անտ: — 83 ոլով: — 89 ոտս: — 95 աղքատ:

[1] Այսինքն 1618ին: